ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

—Ապրիլի 10-ին Սինոդը լսեց ազգիս Վեհափառ Կաթուղիկոսի ապրիլ 7-ի №891 կոնդակը և որոշեց՝ պատուիրել Մ. Աթոռի գանձապահին մատուցանել Վեհափառ Հայրապետին՝ ուղարկելու Կոմսուհի Ելիզաւետա Վորոնցովա—Դաշկովային երեք հարիւր ռուբլի իբրև միանուագ նպաստ Մայր Աթոռի գանձարանից Աբասթումանում կառուցանելի թոքախտաւորների բուժարանի համար։ Օրագիր №248։

—Ապրիլի 10-ին Սինոդը որոշեց տալ վարձով Ամբերդ արօտատեղին Բիւրական գիւղացոց, համաձայն վերջինների նոյն ապրիլ 7-ի խնդրի, տարեկան մի հարիւր յիսուն ռուբլիով, մի տարի պայմանաժամով։ №252։

—Ապրիլի 10-ին Սինոդը լսեց Իւանգորոդ քաղաքի վերաբնակող հանդուցեալ բժ. Աղէքսանդր Տէր Յարութիւնեանցի կտակի գործը։ Հանդուցեալը կտակել է զանազան բարեգործական նպատակների իրագործման համար երկու տուն և մի խանութ Կարս քաղաքում, արժողութեամբ երեքը միասին 21,300 ռուբ. և տոկոսաբեր թղթեր, որոնք պահւում են դրամական հաստատութիւններում, 18,742 ռ. 10 կ.։ Նորին Սրբութիւնը իբրև կտակակատար պէտք է այդ գոյքը գործադրէ կտակի համաձայն։ Հրամայեցին. հանդուցեալ բժշկապետ Աղէքսանդր Տ. Յարութիւնեանի կտակի գործը համարելով Սինոդումս աւարտուած, ներկայացնել Վեհ. Կաթուղիկոսին ի տեսչութիւն։ №253։

—Ապրիլի 26-ին Սինոդը լսեց Գրիգորիոպոլ քաղաքի բնակիչ հանդուցեալ Կարապետ Թիլքիի կտակի գործը և որոշեց, պատուիրել Բեսսարաբիայի կոնսիստորիային շարունակել շահագործել կտակած գոյքը և արդիւնքից տարեկան մի հարիւր ռուբլի տալ Քիշնևի Ս. Աստուածածին եկեղեցուն, երեք հարիւր ռուբլի տարեկան ուղարկել Սինոդս գործադրելու կտակի բ. յոդուածի համաձայն՝ յոգուտ Մայր Աթոռի. իսկ արդիւնքի մնացած բոլոր մասը տալ Քիշնևի եկեղեցական-ծխական դպրոցի հոգա-

բարձութեանը, յանձնարարել Ճեմարանի վարչութեանը, Բեսսարաբիայի թեմից չքաւոր ընտանիքից մի սան պահելու ճեմարանում «Թիլքի» ազգատոհմի անունով։ №262։

—Ապրիլի 28-ին Սինոդը լսելով Մ. Աթոռի Վանական Կառավարութեան անցեալ մարտի 20-ի №83 յայտարարութիւնը նոյն կառավարութեան հաշիւների քննութեան մասին՝ որոշեց յանձնարարել Սինոդիս անդամ Տ. Սահակ վարդապետին՝ սկսուած այս տարուայ յունուարի 1-ից ամսէ ամիս քննել Վանական Կառավարութեան մոլից և ելից հաշիւները և ժամանակին քննութեան արդիւնքը ներկայացնել Սինոդիս։ №264։

—Ապրիլի 30-ին Սինոդը լսելով Կ. Պոլսոյ Պատրիարքի վերոյ. 16 № 838 գրութիւնը հանդուցեալ Տ. Գէորգ IV կաթուղիկոսի ժամանակից կտակած գումարի տոկոսների մասին՝ յօգուտ Ալաշկերտի դպրոցների՝ որոշեց. պատուիրել Մ. Աթոռի գանձապահին ուղարկել Կ. Պոլսոյ Սրբ. Պատրիարքին Ալաշկերտի դպրոցներին հասցնելու համար կտակած գումարի գանձուած %-ը ընդամենը 1802 ռ. 50 կոպ. № 269։

—Ապրիլի 30-ին Սինոդը լսելով ազգիս Վեհափառ Հայրապետի նոյն ապրիլի 2-ի № 743 կոնդակը Մաստարա գիւղի դպրոցի շինութեան մասին՝ որոշեց. Մաստարա գիւղի դպրոցի շինութեան համար միանուագ նպաստ յատկացնել երեք հարիւր ռուբլի նոյն գիւղի այս տարուայ ծխահարկերից, իսկ երկուհարիւր ռուբլի տալ նոյն դպրոցին իբրև ուսուցչի ռոճիկ առաջին տարուայ համար։ № 270։

—Մայիսի 6-ին Սինոդը լսելով Սինոդի պ. պրոկուրորի 19 ապրիլի № 94 գրութիւնը պետական կալուածների վարչութիւններից վանքապատկան, եկեղեցապատկան և դպրոցների կալուածներին վերաբերեալ նրանց վարչութեան ժամանակ վարած գործերի պահանջման մասին՝ որոշեց. պահանջել եկեղեցական և վանական կալուածների վերաբերեալ գործերը Տփխիսի, Գանձակի և այլ նահանգների պետական կալուածների վարչութիւններից։ № 284։

—Մայիսի 7/10-ին Սինոդը լսելով Վանայ առաջնորդա-

կան խորհրդի անցեալ ապրիլ 5-ի № 106 գրութիւնը Սեբաստիոյ Արեւելեան կաթոլիկաց տոկոսների մասին որոշեց. պատուիրել Մինոգիս գանձապահին ուղարկելու Վանայ առաջնորդարանի ներկայացուցիչ պ. Գէորգ Ճէտէգեանին, որը Տփխիսումն է, 458 ռուբլի և այդ գումարի փոխադրութեան մասին տեղեկացնել Վանայ առաջնորդարանին. № 287.

Մայիսի 7/10-ին Մինոգը լսելով աղգիս Վեհափառ Հայրապետի ապրիլ 12-ի № 930 կոնդակը որոշեց. տալ քննիչ Տ. Մատթէոս վարդապետին Նորին Սրբութեան հաստատած հրահանգը և առաջադրել նրան ճանապարհ ընկնել դէպի թեմերը իւր պաշտօնը ըստ հրահանգին կատարելու, սկսելով քննութիւնը վրաստանի թեմից. № 288.



ԿՐՕՆԱԿԱՆ–ԲԱՐՈՅԱԿԱՆ.

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.

«Այս Յիսուս, որ համբարձաւ երկինք, կգայ այնպէս ինչպէս որ երկինք բարձրանալիս տեսաք». Գործք Ա.ռ. I. II.

Պօղոսը չէ խօսում որ և է համբարձման մասին, եթէ նա Յարուցեալի երևալն է թւում. Նա նկարագրած է Քրիստոսի պատկերը, որ ինքը տեսաւ Դամասկոսի առաջ, նոյն կարգաւ, ինչպէս որ երևաց Պետրոսին և տասնմէկին. Նա այն կարծիքին չէ, թէ բաժանման ժամին ինքն աւելի քիչ է տեսել քան ընտրեալներից որ և է մէկը. Ամենայն հաւանականութեամբ նա հիմնւում է այն բանի վերայ, որ ինքն էլ միւսների նման շնորհի արժանացաւ. Հէնց այս իրողութիւնից, որ Պօղոսը իւրը և առաջին յայտ-